

զինչս բազումս ի դրունս այլազգեաց հա-  
րիւր վաթսուն հազար դահեկանս ըստ  
Վարանեցւոյն, զաշակերտսն Սարգսի՝  
դարեալսն յունիթօռս՝ և զոմանս ևս ի  
նոցունց յատեան ածեալ և դատեալ  
հրապարակաւ զնոսին, զոմանս ի նոցանէ  
բրաժեժ առնեն իբրեւ զկրկնակնունքս և  
ապստամբս յեկեղեցւոյ, զոմանց հերս և  
զմօրուսն փետեալ անարգեն, և զայլս  
այլով օրինակաւ չարչարեալ, զբազումս  
ևս ի բանտի եղին երկաթի շղթայիւք,  
յորոց ոմանք յետ աւուրց զերծեալ և  
հասեալ յարեմուտս՝ առ լատինս խօսե-  
ցան զամբաստանութիւն բազում զազ-  
դէն Հայոց, որպէս և ունիթօռք զրեցին  
ի Հռոմ, զայս անդեկացեալ վարդապետք  
Հայոց առաւելան ի զայրոյթ սրտի, և  
զոմանս կալեալ ի նոցանէ՝ մատնեցին ի  
ձեռս իշխանաց, որք արկին ի նոցունց կէս  
մի ի ջուր եռացեալ, և կէս ի տապակ  
ջեռուցեալ, որոց թէ և անհաւան գտա-  
նէր Վարակունեցին Սարգիս, այլ լուեաց  
յիշխանացն սաստից:

Այլ այս Մաղաքիաս՝ որ զգուշացաւ  
այսպէս զՀայոց եկեղեցւոյն յունիթօ-  
ռաց անտի, (1384) ի թուին Հայոց  
ՊՂԳ՝ մեռաւ յանկարծ ի ժամ կերակ-  
րոյ, և համբաւել՝ եթէ դեղ մահու ե-  
տուն նմա Ունիթօռք: Սորա աշակերտ  
էր զամս տասն Միթար Վարանեցի, որ  
զանցս Ունիթօռաց և զվեճակի այնր  
ժամանակի եկեղեցւոյն Հայոց զրեաց, և  
ինքն ևս էանց յՈւնիթօռս, և ատելու-  
թեան ոգւով զրեաց զոր միանգամ զըր-  
եաց զՀայոց, զորմէ և ի վարս իւր:

(Ի յաւագայն)

ԱՐԷԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍ

## ՊԱՏՄԱԿԱՆ

ՅԵՇԱՏԱԿԱՐԱՆ.

ՄՈՂՍԻՍ, ՓԻԼԻՊՊՈՍ ԵՒ ՅԵԿՈՐ ՀԱՅՐԵՊԵՏԷՐ:

Գոհութիւն՝ օրհնութիւն և բարեբա-  
նութիւն պաշտելի և երկրպագելի Տէրու-  
թեանն՝ ինքնաբաւական անուան՝ Հօր  
անսկզբնականի և բոլորից պատճառի՝ յոր-  
մէ ամենայն: Աւարարչակցի բանի իւրոյ,  
որ է ճառագայթ փառաց և նկարագիր է-  
ութեաննորա՝ որով ամենայն: Աւհամա-  
պատիւ բղխեցելոյ յինքենէ Հօգւոյն ճըշ-  
մարտի՝ յորում ամենայն: Առակի ա-  
ռանձնական և բացորոշեալ յատկական  
զիմացն, և անորիշ և նոյնագոյ բնու-  
թեանն. որոյ իսկութեանն հասողութիւն՝  
իւրում միայնում գերաբուն և գերալը-  
րական, բարձրահայեաց և ամենատես  
զիտութեանն ծանուցեալ: Բստ յայա-  
նութեան տնօրինական անաեսութեանն  
քարոզութեան, զՈրդի Հայր զիտացեալ,  
և յՈրդւոյ Հայր իմացեալ, և զիտու  
նոցին Հօգին քննեալ: Բայց համայն զըս-  
տացական զոյից՝ անհաս և թաքուն իմն  
մնացեալ, ստորական բանականացս տե-  
սակաց՝ և բուն իսկ երկնաւորացն սեռից:  
Զի թէպէտ նիւթական ինչ ձեռով, և  
ստուերական կերպիւ պատմաբանի տե-  
սանել զնա մաքրագունիցն պատգամա-  
ւորաց, այլ ոչ զըմբռնումն էութեան  
նորա և ոչ հասումն բնութեաննորա թէ  
զի՞նչ ծանեան. այլ խոնարհական զի-  
ջումն ըստ իմիք նմանութեան տպաւորու-  
թեան որպէս տանէր՝ արարածական կա-  
րողութիւն ցուցաւ, զի զկամս իւր բա-



ցայայտեցէ որոց պիտոյանայ ուղղութիւն: Աշւ նշանակ ի զանազան տեսիւանց և ի պէս պէս երեւանց անտի է, որովք ճանաչի՝ թէ ոչ միայն յայնցանէ՝ է որք կերպարանեցան նմին նմանութեամբ: Այլ գեր ի վերոյ անըմբռնելի և անպարազրելի, անբովանդակելի և անտանելի սահմանաւ իմն ծածկեալ ի խորս անցայտութեան: Աւատովք պաշտեցեալ, յուսով մերձաւորեալ, և սիրով բնակեալ ի սիրտս իւրոց սիրողաց. որով ճանապարհաւ հանդիպել կարացցեն երանելի կենացն և մշտնջենաւոր բարեացն հանդերձելոց. յորում փառք և զօրութիւն յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Յորոց յարաշարժ բարերարութենէ սկզբնաւորեալ աւարտեցաւ տօնունակ և տարեցուցակ հոգեկեցոյց և հրաշապատում մատեանս այս, որ ունի գումարեալ զըստ իւրաքանչիւր աւուրց տօնախըմբութեան խորհուրդս բոլոր տարւոյն, տէրունական կաարմանց, և իւրոց հետոց հետեողաց նահատակաց, միանգամայն և կանոնական աւանդից եկեղեցական հանդիսից, որով վարի մերս ժողով, ճաշակելով հոգեւոր քաղցրութիւն պարգեաց վերնոյն օր ըստ օրէ, կարգեալ և սահմանեալ յերջանիկ հարցն մերոց և քարոզողացն Բանին Աննաց՝ վարդապետացն Այաստանեայց և քաջ հովուացն առաջնոց, յանգագոյն և պատահագոյն յարմարութեամբ, առեալ յԱստուածաշունչ զրոց հին և նոր Ատակարանաց, զբաւորական և աւետարանական օրինօք զլսաւորեալ, առ ի լրումն պայծառութեան տան Տեառն, յորում պարենմանկունք իւր, երգովք հոգեւորօք, բերկրեալ

յիշատակօք նահատակութեանց անդամոց Քրիստոսի, որք ընդ զլեոյն միաւորեալք՝ հայցեն և զմերս յօղաւորութիւն ընդ նոյնն: Քանզի հասեալք լուսաղոյնն փրկութեան, ի ձեռն արեանն հեղման մերովք պաղատակոչ ձայնիւ միջնորդ և բարխօս պատրաստին, զի կենդանեացս և փոխելոցն աստի մահումբ հաւատացելոց անձանց ողորմութիւն՝ հանգիստ և փրկութիւն տացի, և ի միասին պսակաղբեաց երեւցին առաջի ահաւոր դատաւորին. վասն որոյ և ի բոլոր յաւիտենիս յայսմիկ՝ զերազարդ տօնախմբութեամբ ընթերցասէր կամօք՝ յորդորմամբ սիրոյ՝ զայս աւանդ պահեն, և ի սմին և սովաւ զուարճանան, ճանապարհ և ընթացման պատճառ և առիթ մտից զրանն երկնից համարելով, զի կարացուք զելս մեր ուղղել առ վերինն, ուր Քրիստոս նստի ընդ աջմէ Աօր ի փառս Աստուծոյ:

Բայց քանզի՝ գաղափար ստուգադիժ ոչ գտաւ ըստ խնդրոյ ախորժակաց մերոց յոր վայր և յուզումն արարաք, հայելով յօրինակս յոգունս բազում իրօք սխալեալ ի նախատիպ սկզբնաղիր տառից շաւրաղրութենէ, նա և ի կէս օրինակս՝ ըստ սկզբնաղիր գրութեանց անյարմարապէս կարգեալք, և վերջնովք ևս նոյնգունակ ոչ բարեօք աւարտեալք, և յայս ոմանս՝ թիւրութիւնս յանհմուտ զրչաց զանազանապէս սփռեալս տեսանելով, ընդ որ ոչ հաճէր անձն ճշմարտասիրաց: Այսն որոյ և լաւագոյն համարեալ՝ զաստուածախօս գիրս հնոց և նորոց Ատակարանաց՝ զնոյն ինքն զմայրն հարաբատածին գաղափար առգնել, յորմէ ածանցեցաւ գիրքս, ճշգրտապատում բանիւք, լիալիբ



ոճով, անթերի ունողութեամբ, ըստ ուրում խնդիրք իմաստուն քննողաց պահանջին, զորմէ և փոյթ քաջապէս արարեալ պաճուճազարդ գեղեցկութեամբ ըստ նիւթականին և ըստ իմանալոյն՝ աւարտեցաք զաօնալրական տառս, որ ըստ առաջնոցն աւանդութեանց Տարեգիրք յորջորջի։ Որ ունի պարունակեալ զողջոյն ամի զիւրաքանչիւր աւուրց ասորից ընթերցումն, տէրունական հանդիսից, և սրբոց նորին ընթացից, բովանդակեալ օրինական և շնորհական պատգամօք բանից՝ առ ի վայելումն մանկանց եկեղեցւոյ և ի զուարճութիւն նոցին մշտաց, ի փառաբանութիւն ամենազօր անուան Տեառն, և ի գովեստ սիրողաց իւրոց։ Աւարդ՝ գծադրեալ աւարտեցաք զիրքս՝ յամին հազարերորդի հարիւրերորդի երկրորդի թուահաշուութեան Արամեանս տոհմի (ՈՒՄԻ)։ Աւ ըստ մեզ մարդացելոյ բանին Աստուծոյ՝ հազարերորդի վեցհարիւրերորդի յիսներորդի երորդի (1653)՝ որպէս աւանդեցին մեզ ճշմարտապատում օրինակազիրքն առաջինք։

Յաւուրս իշխանութեան Պարսից Շահաբադի երկրորդի, որդւոյ Շահսէփու, որդւոյ Շահաբադի առաջնոյ. ընդ որով տէրութեամբ և բոլոր Հայաստանեայցս երկիր նուաճի՝ անկշռելի տուժից նեղութեամբ՝ և հարկաց ծանրութեամբ՝ և խիստ ծառայութեամբ՝ որպէս երբեմն Խարայել ի հնումն. որոց հզօր բազուկն փրկող լիցի. որում ամենայն ինչ հնաբաւոր է։ Իսկ ըստ հոգեւոր վերադիտողութեան տեսչութեան՝ Տեառն Փիլիպպոսի Արքեպիսկոպոսի, կրկին լու-

սաւորչի, նոյն և ստացողի այսորիկ մատենի, զորոյ հանդէս կենաց, և զքաղաքաւորութիւն վարուց, և զներքութիւն շաւղաց նորա, արնա՝ և զարդիւնաւոր վաւտակ նորա առ ազգս Հայկային, և զջատադոժութիւն Աստուծոյ օրինաց, և զպահպանութիւն կանոնական հրամանաց, ևս և զնուիրողական փոյթ պրնդութեան նորա՝ յընծայել զբազում անձինս՝ Հօրն վերին, և արթուն ակամբք հոգեւել զնոսին, մինչև նկարեացի Քրիստոս յոգիս նոցին։ Ասե զպայծառացուցիչ կարգ նորա առ սահմանաւորութիւնս եկեղեցւոյ, և անխոնջ աքնութիւն իւր առ ի անթերի պահել զայնոսիկ՝ և զերեւելի տօնախմբութիւն հոգեւորական պարուց առ ի նմանէ եղելոց, և զամենայն բարեձեռութիւն ի նմին երանելոյ յօրինելոյ՝ թողցուք այլում վայրի շարահիւսել, և կամ այլում վիպորի վիհի պատմադրիչ. ապա թէ ոչ՝ անվերէպ զխտորին միայնում մնալ՝ յորում ամենայն զանձք ծածկեալ կան, զի յայտնեացի յաւուր արդարութեան իւրոյ և անխաբ դատաստանին։

Արդ՝ նոյն սա երջանիկ Հայրապետս՝ ընդ բազում ուղղութիւնս՝ յաւել և զնորոգութիւն նախագահ Աթոռոյս մեծի Աջմիածնի. քանզի տանին սորին գորով քակեալ և խարխալեալ բոլորովին, վասն որոյ և կազմեաց ամբազոյն մաճուցմամբ։ Ընդ նմին և զբրգունսն եռակի, և զեղերս տանեացն շուրջանակի։ Առատացուցեալ և զարբութեան սպասան, զոսկեղէնս և զարծաթեղէնս, և զկերպասեղէնս և զնկարակերտս կերտուածոց, հանդերձ այլովք վայելչական զարդօք։ Ըստ նմին և զզ-



զերեանց բազմութիւնս զանազան մատենից, առ ի լրումն հոգեւոր և մարմնաւոր ակործակաց հասարակաց: Աւս և զարեւելեան կողման ձեռակերտան ծագէ ի ծագ սա շինեաց: Ադ և արաքոյ պարսպի սորին շինութիւնս ոմանս՝ զերեց յարկացն ձիթաստանաց, և զասպատանան՝ ի բնակութիւնս ձիոց և ջորւոց, և զայլ մասնաւոր պիտոյից տեղիս՝ հանգերձ այգեստանեօք և բուրաստանօք յորովիւք հոգացմամբ՝ շուրջ զսովաւ, և ի սմանէ բացակայ: Այլ նախկին դասիւ՝ թէպէտեւ վերջին ըստ կառուցման՝ նորոգեաց մեծածախ և զվկայարանս հանգրտեան սրբոյն Ափսիսիմէի և զՎայիտանայ նորուն գայեկի: Յորոց բարեխօսութենէ յայտնեցան և մասունք նշնարաց մաքուր օսկերաց նոցա՝ թաքուցեալք յանակնունելի վայրի, ուր ոչ գոյր կարծիք: Ուստի երեւի իսկ նշոյլ խնամոց Տեառն առ վշտացեալ Ազգս տակաւին ծաղել, որով բարեյոյս արասցէ առ ինքն, զի մի՛ իսպառ ընդ վայր հարցեն: Սակայն և աստանօր զմնացելովքն ոչ զանց առնեմք, այլ ահա համառօտաբար անցանեմք, ըստ որում և զնախադրեցելովքս: Քանզի սկիզբն և պատճառ ձեռնարկութեան նորոգման զերազա՛հ Աթոռոյս՝ երանելի հայրն մեր և սլայծառ Զահն եկեղեցւոյ՝ սրբազան Հայրապետն Հայոցս մեծն Սովսէս եղև, որ և յԱստուծոյ շարժեալ ի սէր առ սուրբ Աթոռս բազմաշարժար աշխատութեամբ՝ անբերելի կրթիւք գուն զօրծեալ հոգւով չափ ըսկիզբն արարեալ նախ մաքրեաց զսա ի զիլակուտեալ աղբից՝ յորում թաղեալ էր շուրջանակի յամենայն կողմանց. զորս

և ջրով ողողեալ հարթայատակ զեփն պատրաստեաց: Աւ ապա պարսպեաց, ըստ որում և յաջողեցաւ: Աստարեաց և զերեց կողմանց շինուածան՝ որ ի միջոցին. սրբեաց և զառճար սրբոյն Վրիգորի ի զազեր ծրտաց թռչնոց, ըստ որում աւերակաց վայրաց է անդարդութիւն, որպէս երբեմն և մարգարէն Ամովսան Բաբելոնի նշանակէր՝ թէ յուշկապարիկք բնակեցեն ի նմա և ողնիք ձազս հանցեն ի նմա: Վաղարիցուցեալ զձուռողական ձայնս նոցա՝ որ զլսելիս մարդոց խլացուցանէին, և զյուսարանսն վանդակապատ յօրինեաց: Հանդերձեաց սալայատակ և զկոխելի երկիր որ ի նմա, և ևս յառաջեալ ի բաց էառ զգմբէթ նորին՝ որ էր նիստ ի բնէ՝ և խախտեաց՝ և բարձրաբերձ իմն տեսաւ և անդնեաց. յորոյ կատարման և ինքն փոխեցաւ առ անձկալին իւր Քրիստոս: Ապեալ յաթոռ Հայրապետութեան ամս չորս և ամիսս ըստ ամացն: Սա երիցս չորս առ թագաւորն Պարսից և եգիտ շնորհս առաջի նորա, որով և աղատեաց զԱթոռս ի բռնագոյն հարկաց ծանրութենէ, որ ի պատճառէ անուղղագործ առաջնորդաց եղաւ ի վերայ իրբև զանուր երկաթեայ: Ար սա յերկրէն Սիւնեաց ի գաւառէն որ կոչի Աճնան, ի գեղջէն Խոտանանու, զորով ամենեին պարզ բարոյիւք և ազատական մօք, գեղեցիկաղիւր և փառազարդ զիմօք վայելչացեալ, զմիջինն ունելով չափ հասակին, և բոլորովին ներքին և արտաքին մարդով շնորհաշուք ճոխութեամբ արտափայլեալ: Յորում յարացոյց զսուրբն զԽաչակ Պարթևաղինն համարեսցիւ ըստ ամենայն բարունակ տեսութեան, բնականօք և



մակտացականօք առատացեալ զովարա-  
նութեամբ: Աւ այսպիսի ցանկալի երևե-  
ալ աշխարհի և փափագելի ամենեցուն  
ծանուցեալ՝ փոխադրի յանմահական  
կեանսն վաթսուն ամաց. և եղաւ պատ-  
ուական մարմին նորա ի փոքրագոյն բլրին  
որ հայի յարեմուտս կոյս ի վերայ շը-  
րաստան գետոյ, և ի հարաւակողմն ի կա-  
յարանն իւր սեպհական, ուր է շերիմ  
առաքելոյն Անանիայի, որ և է իսկ մենաս-  
տան կրօնաւորաց, սրտեալ շուրջանակի  
պարսպաւ ի նորին աշխատանաց վաստա-  
կոց:

Յետ որոյ յաջորդեալ նստի ի տեղի  
նորա յաթոռ. Հայրապետական բարեփառ  
Տէրս մեր՝ զորմէ նախ բանիւ յիշատակե-  
ցաք սակաւութիւն և զգործոց նորա համա-  
ռօտաբար անցաք, որ և արդ փայլէ յե-  
կեղեցի Աստուծոյ իբրեւ զճահն շնորհ-  
լի, հաստատեալ ի վէմն անդրդուելի, և  
յեցեալ ի խորիսխն անշարժ յուսոյն,  
պահպանեալ հայրական աջովն, և զօրա-  
ցեալ վերնական խնամօքն: Արդ՝ սոյն սա  
երջանկապատիւ և սրբազան Հայրապետս  
մեծաւ իմն սիրով և յաւէտ փափագա-  
նօք ետ գրել զսուրբ տառս զայս լիապա-  
տում և ընծայեաց սուրբ Ճաշոցս Ա. Լը-  
միածնի՝ ընդ բազում նուէրս, ի պայ-  
ծառութիւն իւր և ի զբօսանս մանկանց  
իւրոց:

Բայց ի սկզբնաւորութեան զբոցս՝ պա-  
տահեցաւ բարեպաշտուհի և Քրիստոս-  
սասէր կին ոմն, որոյ անունն ճանաչիւր  
Աբրիխան, ի Տիգրանակերտ քաղաքէ,  
որ և եկեալ էր յերկրպագութիւն Աստ-  
ուածաւորս տեղոյս, յօժարեալ ցանկա-  
ցաւ զսա յարգար վաստակոց իւրոց առ

ի յիշատակագրութիւն յինքենէ ի սուրբ  
Աթոռս գանձ անձողոպրելի. վասն որոյ և  
թախանձանօք պաղատիմ առ հոգևոր  
հարսդ և եղբարսդ՝ որք զկնի մեր ժա-  
ռանդէք զայս տառ, և ոյք վայելէք հո-  
գեւորապէս ընթերցմամբ կամ զաղափար  
առնելով, և կամ իւրք ինչ օգտութեամբ  
յիշեալիք բարեպէս մօք սրբանուէր ա-  
ղօթիւք առ Քրիստոս յոյսն բնաւից՝  
զերանելի հայրս մեր զՏէր Փիլիպպոս շը-  
նորհագորդ Վիտապետ, որ առիթ եղև  
բարեաց բազմաց՝ և սոյն այսր մատենի  
ստացօղ՝ հանդերձ իւրովք ամենայնիւք  
աշակերտեալ մանկամբք, և համօրէն հո-  
գեսնունդ որդեկօք: Աւ զհամեստաշուք  
և զերկիւղած կինն այն Աբրիխանն զո-  
յիւք բոլորիւք կցորդովք, և զիւրային  
տոհմն զամենայն, զայրն իւր զԱաֆարն,  
և զԾնօզսն իւր՝ զՀայկիպն, և զԲեկուհն,  
և զեղբայրն իւր զԱհաթեսի Գառնգիւհն,  
և զքոյրն իւր զԱնկիսանն, և զգաւական  
իւր զԱստուածատուրն և զՊահարն, և  
զմերձաւոր արեանառունն, նաև զզօղ  
սորա յոքնաշատ ջանիւք՝ և կարի զգու-  
շաբար հոգացողութեամբ յանդ հանօղ՝  
զՊատեփաննոս քահանայ: Աւ զարդարօղ  
զսա ոսկեղօծ երանգօք և պէս պէս որա-  
կօք զՆահապետ դպիր: Տինա և զբոլոր  
զամենեսեան, որք հազորդեցան իրօք իրօք,  
զԹուղթսն յարմարելով յընդունակու-  
թիւն արուեստականութեան, և զսրբագ-  
րութեան կարողութիւնսն առատացու-  
ցանելով, ևս և զյօժարութիւնս յո-  
լովս երեւցուցանելով մինչև ի տիրապէս  
կատարումն՝ աղաչեմ և աղերսեմ յիշել  
ի խորոց սրտէ առ զԹութիւնն և յողոր-  
մութիւնն Քրիստոսի Աստուծոյ մերոյ:



Արպէս զի ի միասին բոլորապէս յիշողօք  
և յիշեցելովք գտցուք թողութիւն մե-  
ղաց, և ներումն յանցանաց, փրկութիւն  
յաւիտեանականաց և հանգիստ անանց կե-  
նաց յառատ բարերար կամաց ստեղծողին  
և նորոգողին զմեզ՝ Հօր և Արդւոյ և Հո-  
գւոյն սրբոյ, օրհնելոյն ի բնաւից գոյից և  
հանուրց էից, անսահման բանիւ և ան-  
ղրաւ պայմանաւ, անեղբական խնդու-  
թեամբ և անղրաւ ցնծութեամբ, յարա-  
ձգական յաւիտենիւ և անհուն քանա-  
կութեամբ ամէն. եղիցի եղիցի: — Ընդ  
որս և ինձ իսկ Մովսիսի բանասիրի, վեր-  
ջակարգեալ խուն զլուսեցուածս արարողի,  
ձեր հատուցման ընդ հուսկ յետինսն  
շնորհեցի, որ ի ժամու յայգւոջ Տեա-  
ռնն առակագրի: Վանզի՛ ընդ յապաղ-  
մամբ անկեալ սոյն մատենն, առ ի բո-  
լորապէս կատարումն իւր եղերել, փո-  
խադրեալ լինի յաստեացս երանելի Հայ-  
րապետն Փլիկպպոս, զորմէ և համառօ-  
տիւ իսկ ճառեցաք: Ընդ որոյ յաջորդէ  
զԼԹոռ լուսաւորչին՝ բարեփառ և եր-  
ջանիկ Հայրապետն Յակովբոս՝ յամի հա-  
ղարերորդի հարիւրերորդի և չորրորդի  
թուականութեան Հայկական սեռի: Գո-  
լով հայրենեօք ի Զուղայու, որ է մերձ ի  
Նախճաւան, իսկ նախնականօք ի Շի-  
րակ գաւառէ, այլ ծննդեամբ և սննդեամբ  
ի Շօշ քաղաքէ Պարսից, ուր Հայկա-  
ղունք յոլովք գոն պանդխտեալք այժմ:  
Սա այր ընտիր և առաքինի եղեալ, ողոր-  
մած և քաղցր առ ամենեւեմն: Ա՛սն  
որոյ և արժանաւորի գերադրական աս-  
տիճանի, և գլուխ կոչի հանուրց Հայկա-  
կան տոհմի, և նստի ի Վրիստոսաղարդ և  
ի մեծապայծառ աթոռ սրբոյն Գրիգորի

Լուսաւորչին: Եւ որով և սոյն չքնա-  
ղատեսակ և լիապատում տարեցուցակ  
գիրքս այս աւարտեցաւ, ոսկենկար երան-  
գօք և պատշաճագոյն նիւթովք և են-  
թակայիւք պաճուճեալ յօրինեցաւ ըստ  
ամենայնի: Բայց գրեցաւ ձեռամբ Ատե-  
փաննոս քահանայի, և ծաղկափթիթ տե-  
սակօք զարդարեցաւ: Ելէքսիանոսիւ և  
Նահապետիւ արուեստաւորօք, հոգա-  
ցողութեամբ և սատարութեամբ Ատե-  
փաննոսի Աւարդապետի:

Եւ արդ՝ ընդ ժամանակս քաջ և բա-  
րի Հովուապետին տեառն Յակովբայ՝ յո-  
րում և մատեննս այս եզերումն ընկալաւ,  
կատարեցաւ մեծածախ շինուածովք և  
սխրատեսակ և ձոխադիտակ ձեռակերտս  
հնչարանաց\*)՝ յարեալ ընդ մեծի կաթու-  
ղիկէին և մօր Հայաստանեայց եկեղեցեաց,  
ուրանօր ձայնք բարձրազանչ զանգակաց՝  
առ տիւ և առ գիշեր ըստ ժամու ժամու  
հնչեն և գոչեցուցանեն: Սովաւ և ի ձե-  
ռն սորին յաւերան և սպասք յօլովք և  
անօթք բազմաթիւք մեծի տաճարիս: Ընդ  
որս և մատենից գումարութիւնք ի մի ոչ  
սակաւք, և նոցին խոկացողք և ի նոյնս  
պարապողք յոգնակաճառք: Եւ որով և  
շինուածոց ոմանց վայելչականաց հիմ-  
նարկութիւնք, և այգեաց և բուրաստա-  
նաց յօրինուածք, և համանգամայն բո-  
լորապէս և մասնաւորաբար արդեանց վի-  
ճակից սեպհականութիւնք գործեցան:  
Ալք և ԼԹոռոյս մեծի առ ի լրումն ձո-  
խութեան սահմանեցան, ոմանք պիտոյք  
և այլք զարդք պատեհականք: Եւ արդ  
իսկզբանց ի գրութեանց անտի մինչև ցա-

(\*) Զանգակատուն:



ւարտուն մատենին՝ եւ ամբ հնգետա-  
սան. յորում լրացէս կատարեալ կնքե-  
ցաւ՝ ի փառս եւ ի գովութիւն գերբակղբ-

նական պատճառին ամենայնի, եւ բոլորից  
շարունակողին, եւ վախճանական եւ յա-  
ւիտենական Լինն. եղիցի եղիցի:

## ՅԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

### ԹԱԳԱՒՈՐԱՅ ԻՍՐԱՅԷԼԻ ԵՒ ՏԱՆՆ ՅՈՒԴԱՅ

Թէ է քանի՞ ան լազաւորեցին, եւ յորում պեղաւ, ո՞ր օժան եւ յորոց մարգարեից, ին-  
չո՞ք է նոյանէ յասորածալալորութեան կային եւ ոչո՞ք կապալալեցան, ղի՞նչ գործեցին, եւ  
յորում պեղաւ Նապոթաշին գրեալ, հանրէն ծանօթութեամբ:

Ընդ որս եւ Բաւալաւիս-իւն Եւ Ի Մապոլա, եւ Լաւապալ երկու գրոցն:

| ԹԱԳԱՒՈՐԱՅ ԻՍՐԱՅԷԼԱՅԻՈՑ.                                                                                                                                         | Ո՞ր<br>գրէն.                  | Ո՞ր լազա-<br>ւորեցին.   | Ի քանի՞<br>ան. |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------|-------------------------|----------------|
| 1, Սաւուղ թագաւոր օժանի ի Սամուէլէ, թագա-<br>ւորէ Իսրայէլի . . . . .                                                                                            | Ե. թգ.<br>ժ. 1.               | Ղաւո-սաղէ.              |                |
| 2, Դաւիթ օժանի ի Սամուէլէ առ կենդանութեամբ<br>Սաւուղայ, թագաւորէ Իսրայէլի . . . . .                                                                             |                               | Ի Քէթրոն.<br>Ղաւո-սաղէ. | 7<br>33        |
| 3, Սողոմոն օժանի ի Սաղոմի քահանայէ, եւ թագա-<br>ւորէ Իսրայէլի . . . . .                                                                                         | Գ. թգ.<br>ա. 39.              | Ղաւո-սաղէ.              | 40             |
| 4, Ինէ զտուն Տեառն յամի ելից Իսրայէլի Ղազիպ-<br>տոսէ 440, եւ ի չորրորդ ամի թագաւորութեան<br>Իւրոյ, զամս եօթն կատարի տուն Տեառն:                                 | Գ. թգ.<br>Զ. . . . .          |                         |                |
| 4, Ուրովամ որդի Սողոմոնի օժանի ի Սիկիմ, այլ<br>թէ յուսմէ, չի՞ք անուն . . . . .                                                                                  | Գ. թգ.<br>ժ. 1.               |                         |                |
| 5, Երիւ որդի Ուրովամայ թագաւորէ Յուդայ. ի<br>սմանէ սկսանի չղնիլ տեղի օծութեան. եւ թէ յո-<br>րոց օժան ի մարգարէիցն . . . . .                                     | Գ. թգ.<br>15. 1.              | Ղաւո-սաղէ.              | 3              |
| 6, Եսա որդի նորա թագաւորէ Յուդայ . . . . .<br>Սա արար ուղղութիւն առաջի Տեառն որպէս<br>Դաւիթ. եւ ի բաց արար զմայր իւր ի տիկնու-<br>թենէ, զի կռապաշտեաց . . . . . | Գ. թգ.<br>ժ. 9.<br>Ե. . . . . | Ղաւո-սաղէ.              | 41             |
| 7, Յովսափատ որդի նորա թագաւորէ. առնէ ուղ-<br>ղութիւն առաջի Տեառն: Ի սորա աւուրս Լազիսէ<br>մարգարէ: . . . . .                                                    | Գ. թգ.<br>է. 42.              | Ղաւո-սաղէ.              | 25             |
| 8, Յովրամ որդի նորա թագաւորէ. արար չար ա-<br>ռաջի Տեառն. զի զուտար Եքայաբու էր նորա ի<br>կնութեան: . . . . .                                                    | Գ. թգ.<br>ժ. 16.              | Ղաւո-սաղէ.              | 40             |